ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը և Հայաստանի գրողների միությունը սկսում են գրական նոր պարբերականի հրատարակությունը: Հանդեսը պետք է դառնա գրական մտքի ամբիոն:

Նրա էջերում քննության են առնվելու հայ գրականության պատմության հարցերը՝ սկզբից մինչև մեր օրերը: Հայ գրականության հազար հինգ հարյուր տարվա պատմությունն այսօր գրականագետների առջև դնում է նոր ու լուրջ հարցեր, որոնք համակողմանի ուսումնասիրության կարիք ունեն: 20-րդ դարի ավարտը փակում է մի ամբողջ դարաշրջան ոչ միայն քաղաքականության ու տնտեսության մեջ, այլև, ու ամենից առաջ, հոգևոր կյանքում: Փոխվում է մեր հայացքը պատմության և աշխարհի հանդեպ: Սա չի նշանակում, որ արժեզրկվում է այն ամենը, ինչ արվել է գրականության պատմաբանների կողմից նախորդ դարում: Սա միայն նշանակում է, որ 20-րդ դարում գրականագիտության կուտակած հարուստ նյութը ևս վերաիմաստավորվում է:

Տարբեր պատճառներով անցյալում չեն ուսումնասիրվել կամ ամբողջ խորությամբ չեն ուսումնասիրվել առանձին գրողներ կամ առանձին երկեր ու երևույթներ: Դա զգացվում է հատկապես սփյուռքահայ գրականության պարագայում: Մենք դեռ հեռու ենք սփյուռքահայ գրականության մասին ամբողջական պատկերացում ունենալուց: Վերջին տասնամյակներում սկսված գործընթացը դեռ շատ հեռու է ավարտված լինելուց, և նոր հանդեսի գլխավոր խնդիրներից մեկն այս բացը լրացնելն է:

Հանդեսը մեծ տեղ է տալու ժամանակակից հայ գրականության հարցերին: Նրանում տեղի ունեցող ներքին խմորումները համակողմանիորեն և պարբերաբար հետազոտվելու են նոր պարբերականի էջերում:

Գրականության տեսության խնդիրները ևս լինելու են «Գրականագիտական հանդեսի» ուշադրության կենտրոնում: Տակավին XX դարի 60-70-ական թթ. սկսած ինքնուրույն տեսական հետազոտությունները

պետք է ընդլայնվեն, օգնեն իմաստավորելու գրականության շարժումը ոչ միայն ազգային-հոգևոր կյանքի համատեքստում, այլև համաշխարհային գրական զարգացման համատեքստում: Առհասարակ, պարբերականի խմբագրությունը ծրագրում է հանդեսի էջերում լայնորեն ներկայացնել գրական զարգացումներն ամբողջ աշխարհում: Մեր հնարավորությունների սահմաններում մենք պետք է թարգմանաբար ներկայացնենք համաշխարհային գրականագիտական մտքի այն նշանավոր գործերը, որոնք մինչ այդ անծանոթ են եղել մեզանում:

Գրականագիտության զարգացումն առանց բանավեճերի հնարավոր չէ: Եվ «Գրականագիտական հանդեսը» բաց է լինելու բանավեճերի, նոր, անսովոր կարծիքների, խիստ, բայց առարկայական (օբյեկտիվ) և հիմնավորված գնահատականների, նոր մեկնաբանությունների համար: Միակ բանը, որ մերժում ենք հենց սկզբից, անձնական հարձակումներն են, անհիմն պնդումները, որևէ մեկին «ջախջախելու» ձգտումը. դրանք կապ չունեն գիտության հետ: Մեզ համար անընդունելի է լինելու նաև սիրողականությունը, որը, դժբախտաբար, վերջին շրջանում ծաղկում է:

Մեր հանդեսը ուղղված է ընթերցողների լայն շրջաններին՝ գրականագետներին, գրականության ուսուցիչներին, ուսանողությանը, բարձր դասարանների աշակերտներին, բոլոր նրանց, ում հետաքրքրում է ազգային և համաշխարհային գրականությունը:

Մենք համագործակցության ենք հրավիրում բոլոր մասնագետներին և բոլոր այն գիտությունների ներկայացուցիչներին, որոնք սահմանակցում են գրականագիտությանը՝ լեզվաբաններին, փիլիսոփաներին, արվեստաբաններին և մյուսներին: Մենք համոզված ենք, որ այսպիսի համագործակցությունը օգտակար կլինի ոչ միայն գրականագիտության, այլև մյուս հասարակական գիտությունների զարգացման համար:

Հանդեսն ուշադիր է լինելու մանավանդ երիտասարդ մասնագետների, ասպիրանտների, ուսանողների նկատմամբ: Նրանք պետք է շարունակեն, զարգացնեն, խորացնեն այն բոլոր ավանդույթները, որոնք ստեղծվել են հայ բանասիրության և գրականագիտության մեջ, նոր գաղափարներ և մոտեցումներ առաջադրեն՝ հենվելով այդ ավանդույթների և համաշխարհային գրական մտքի ձեռքբերումների վրա:

Եվ այսպես՝ ընթերցողներին է ներկայացվում «Գրականագիտական հանդես»-ի առաջին համարը: Մենք սպասում ենք ընթերցողների արձագանքին՝ դիտողություններ, առաջարկություններ, կարծիքներ...

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ